# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ-ՔԾ-ՔՄ-ԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան

« 14» հունիսի 2019թ.

Ժամը՝ $12^{00}$

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի անդամներ | Է. Ոսկանյան |
| | Ռ. Շահազիզյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ժ. Դադիյան |

**Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ,
- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

**1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ**

**Ընդունել ի գիտություն:**

Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հունիսի 7-ին, հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հունիսի 12-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

**2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ**

**Ընդունել ի գիտություն:**

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հունիսի 10-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հունիսի 12-ին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

**3. Հանձնաժողովի ընդունած որոշումները**

Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա « ՀՀ-ՔԾ-ՔՄ-ԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԷՄ ՓԻ ՋԻ» ՍՊԸ-ին:

2.2 Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով, «ԷՄ ՓԻ ՋԻ» ՍՊԸ -ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

**4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի անդամներ | ________ | Է. Ոսկանյան |
| | ________ | Ռ. Շահազիզյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ________ | Ժ. Դադիյան |